

ԱՐԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ



ՆԱՏՈՐ 6
2013

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՆԱԽԱՆԱԲԱՆ
ԱՐԱՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԱՄԲՈՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

(Պրոֆեսոր Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյանի ծննդյան 60
ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու)

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2013

Հրատարակվում է
ԵՊՀ արևելագիտության ֆակուլտետի
գիտական խորհրդի որոշմամբ

Խմբագրական խորհուրդ՝
Խաչիկյան Մարգարիտա - ք.գ.դ., պրոֆեսոր
Հովհաննիսյան Դավիթ – ք.գ.թ., պրոֆեսոր
Կարաբեկյան Սամվել - ք.գ.թ., դոցենտ
Տոնիկյան Սոնա – ք.գ.թ., դոցենտ
Յավրումյան Մարատ - ք.գ.թ., դոցենտ
Քոչարյան Հայկ – պ.գ.թ., դոցենտ
Հարությունյան Արայիկ - պ.գ.թ., դոցենտ

Արաբագիտական ուսումնասիրություններ. Պրոֆեսոր Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյանի ծննդյան 60 ամյակին նվիրված գիտաժողովի նյութերի ժողովածու, հատոր 6, ԵՊՀ հրատարակչություն–Եր.: 2014.-154էջ:

Ժողովածուի մեջ հրատարակվում են 2013 թ. հուլիսի 1-ից 3-ը ԵՊՀ Արաբագիտության ամբիոնում կազմակերպված գիտաժողովի նյութերը: Գիտաժողովը նվիրված էր պրոֆեսոր Դավիթ Արտաշեսի Հովհաննիսյանի ծննդյան 60 ամյակին: Ժողովածուն նախատեսված է արևելագետների, քաղաքագետների, մշակութաբանների, սոցիոլոգների, ազգագրագետների, հայագետների, արևելագիտության, պատմության և միջազգային հարաբերությունների բաժինների ուսանողների, ինչպես նաև ընթերցող լայն շրջանակի համար:

**ՄԻՋՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅ-
ԵԳԻՊՏԱԿԱՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ**

*Արթուր Իսրայելյան
ԵՊՀ դիվանագիտական
ծառայության և մասնագիտական
հաղորդակցման ամբիոն, դոցենտ*

Մենք մեր բազմադարյան պատմության ընթացքում հանդիպել ենք բազմաթիվ ազգերի և մշտապես եղել ենք տարբեր մշակույթների ու կրոնների հաղորդակցման կենտրոնում: Ապրելով մի շրջապատում, որը նաև միջմշակութային, քաղաքական և տնտեսական համագործակցության խաչմերուկ էր հանդիսանում, անմիջական շփումներ ենք ունեցել բազմազգ և բազմակրոն հասարակությունների հետ: Եվ այդ մշակութային և միջկրոնական շփումներն, ինչ խոսք, չէին կարող չանդրադառնալ նաև հայ-արաբական հարաբերությունների վրա: Միջմշակութային հաղորդակցման համար եղել են տարբեր պատճառներ և դրանցից կարելի է առանձնացնել առևտրական ճանապարհներն ու դրանց զարգացումը, ինչպես նաև քաղաքական ու տնտեսական հարաբերությունների ամրապնդումը:

Տարբեր պետությունների համայնքներում ապրելը մեզ հնարավորություն է տվել առաջինը՝ նախ և առաջ շատ լավ տիրապետել լեզվին, երկրորդը՝ իմանալ արժեքային համակարգը, երրորդը՝ մշակել մեր մեջ հարգանք և ըմբռնում ոչ քրիստոնեական ավանդույթների և արժեքների, տեղի ժողովուրդների սովորույթների նկատմամբ և լինելով օրինակելի քաղաքացիներ նաև վայելել տեղի ժողովուրդների վստահությունը:

Արաբ միջնադարյան պատմիչ Թակի ալ-Դին Ահմադ իբն Ալի ալ-Մակրիզին (1365-1441թթ.) միջնադարի այն բացառիկ հեղինակներից է, ով իր աշխատություններում բազմիցս անդրադարձել է Եգիպտոսում ապրող հայերին, նրանց գործունեությանը և դասել հայկական համայնքը օրինակելի համայնքների

շարքին:¹ Ալ-Մակրիզին բովանդակալից է ներկայացնում ֆաթիմյանների, այուբյանների և մամլուքների ժամանակաշրջանում գործած հայերի մասին տեղեկություններ, որոնց մեջ առանձնացնում է քաղաքական գործիչների, ում գործունեության հետ էին ուղղակիորեն կապված Եգիպտոսի գոյության և տնտեսության զարգացման հարցերը:

Հետևելով արաբ միջնադարյան պատմիչների հաղորդումներին տեսնում ենք, որ պատմության ընթացքում եղել են դեպքեր, երբ հայ կառավարիչների և Եգիպտոսը կառավարող մուսուլման առաջնորդների միջև հաստատվել է ամուր փոխվստահություն: Օրինակները բազմաթիվ են, սակայն կարելի է թվարկել դրանցից մի քանիսը. Նուր ալ-Դին Ջենգիի և Մլեհ իշխանապետի,² ալ-Մուսթանսիր խալիֆի և Բադր ալ-Գամալիի³, Սալահ ադ-Դին Այուբիի և Բահա ադ-Դին Կարակուշի,⁴ Նասեր Մուհամմադի և Օշին Պայլի միջև հաստատված ամուր փոխվստահությունն ու բարեկամական հարաբերությունները և այլն: Այս շարքը կարելի է ավելացնել, սակայն այստեղ կցանկանայի անդրադառնալ աբասյան խալիֆ ալ-Մուսթանսիրին և հայազգի վեզիր Բադր ալ-Գամալիին՝ որպես միջմշակութային հաղորդակցման ամենավառ օրինակ:

Հատկանշական է տնտեսական բնագավառում Բադրի կատարած բարեփոխումներից ամենակարևորը. դա մուսուլման բնակչությանը երեք տարով հարկերից ազատելն էր. «Երեք տարի հողը շնորհ ըրավ երկրագործներուն, որով հողագործները վիճակի

¹ المقريزي: كتاب المواعظ والاعتبار بذكر الخطط والآثار، تحقيق أمين فؤاد سيد، مؤسسة الفرقان للتراث الإسلامي، لندن ٢٠٠٢ م، ج ١، ج ٢، ص ٢٢٢، ٤٠١، ٥٢٨، ج ٣، ص ١٧، ١٩، ١٠٣، ٧٥٠، ٧٧٩، ٧٨١.

² Ղ.Ալիջան, Շնորհալի և պարագայ իւր, Վենետիկ 1873, էջ 319

³ المقريزي: كتاب المواعظ والاعتبار بذكر الخطط والآثار، تحقيق أمين فؤاد سيد، مؤسسة الفرقان للتراث الإسلامي، لندن ٢٠٠٢ م، ج ٢، ص ١٢٤.

⁴ Արաբ շատ մատենագիրներ հայազգի Բահա ադ-Դին Կարակուշին հաճախ որակում են որպես Ռումի, Մըսրլեան Գ. Ականաւոր Հայեր Եգիպտոսի մեջ, տպարան Սահակ-Մեսրէպ, Կահիրէ 1947, էջ 111

բարևոքում ունեցան անոր օրով և հարստացան»:⁵ Տնտեսական վիճակի մասին ահա այսպես է նկարագրում ալ-Մակրիզին. «բնակչությունը շատ ծանր վիճակում էր հայտնվել և չէր կարողանում անգամ գումարներ հայթայթել հաց գնելու համար, ուր մնաց հարկեր վճարեք, մարդիկ ուտում էին շների և կատուներին, մինչև որ երկրում վերացան դրանք և որ շան գինը երկրում հասնում էր 5 դինարի»:⁶

Բաղրի և մուսուլման բնակչության միջև միջմշակութային երկխոսության և ընդհանրապես հարաբերությունների մասին խոսելիս պետք է կարևորել մեկ փաստ: Նա, լինելով ուրիշ մշակույթի կրող և արժևորելով նրանց արժեքային համակարգերը, ցույց է տալիս հարգանք ուրիշ արժեքային համակարգեր ունեցող մուսուլման բնակչության նկատմամբ: Լինելով օտար՝ օտարի արժեքները դարձրեց իրենը և ստեղծեց նոր փոխհարաբերություններ այդ արժեքային համակարգերում: Նույնը կարելի է ասել նաև Բաղրի որդու՝ ալ-Աֆդալի մասին, ով բնակչությանը հարկերից ազատելուց բացի երկրում կառուցեց բազմաթիվ ջրանցքներ, որոնց մի մասը գործում է ցայսօր: Բաղրի և Աֆդալի շնորհիվ Եգիպտոսի բնակչությունը առևտրական համագործակցության միջոցով միջմշակութային շփումների մեջ մտավ նաև եվրոպական արժեքային համակարգերի հետ՝ հատկապես իտալական առևտրական քաղաքների հետ:

Միջմշակութային հաղորդակցության արդյունքում սկսվեց յուրօրինակ երկխոսությունն ֆաթիմյան խալիֆների և հայ քաղաքական գործիչների միջև: Այդ հաղորդակցումը երկխոսության միջոցով հնարավորություն տվեց վերջիններիս տնօրինելու պետական ապարատը և կատարել բարեփոխումներ: Խալիֆի կողմից հայերին վեզիրների պաշտոնում նշանակելը և նրանց

⁵ Մըսրլեան Գ. Ականաուր Հայեր Եգիպտոսի մեջ, տպարան Սահակ-Մեսրեպ, Կահիրե 1947, էջ 26

⁶ وأكل الناس الكلاب والقطط حتى قلت الكلاب. فبيع كلب ليؤكل بخمسة دنانير، وتزايد الحال حتى أكل الناس بعضهم بعضاً». المقرئزي: إغاةة الأمة بكشف الغمة، دار الكتب المصرية القاهرة 1946، ص 24-25.

տիտղոսներ շնորհելը ինքնանպատակ չէր: Միանշանակ պարզ էր, որ խալիֆները երկրում չէին վայելում հարգանք և չունեին վստահություն ժողովրդի կողմից: Ուստի երկրում քաղաքական հավասարակշռությունը պահելու համար հայ ազդեցիկ վեզիրները օժտվեցին բարձրաստիճան տիտղոսներով, որը նրանց հնարավորություն տվեց հավատարիմ մնալով խալիֆներին, երկրում կատարել բարեփոխումներ, ինչը բխում էր պետության շահերից: Հիշատակման է արժանի Բադրին և Աֆդալին տրված ամենաբարձր տիտղոսներից մի քանիսը: Դրանք են՝

Բադր ալ-Գամալի

1. Զորքերի հրամանատար - **أمير الجيوش**
2. Հավատացյալների էմիրի սիրելի, ընկեր - **خليل أمير المؤمنين**
3. Մուսուլմանների առաջնորդ - **قائد المسلمين**
4. Կրոնի պահապան, օգնական - **ناصر الدين**
5. Իսլամի պահապան - **حافظ دين الإسلام**
6. Իսլամի սուր - **سيف الإسلام**

Ալ-Աֆդալ

1. Թագավորների թագավոր - **شاهنشاه**
2. Զորքերի հրամանատար - **أمير الجيوش**
3. Հավատացյալների էմիրի սիրելի, ընկեր - **خليل أمير المؤمنين**
4. Մուսուլմանների առաջնորդ - **قائد المسلمين**
5. Մուսուլմանների առաջնորդ - **قائد المسلمين**
6. Մարդկության պահապան - **حافظ الانسان**
7. Մուսուլմանների ուղեցույց - **دليل المسلمين**
8. Իսլամի փայլ - **جلال الإسلام**

Այստեղ հարց է ծագում, թե ինչ ճանապարհով դա նրանց հաջողվեց իրականացնել: Նրանք որպես հիմնական զենք օգտա-

գործեցին լեզուն և տեղեկացվածությունը իսլամի, իսլամական մշակույթի վերաբերյալ, կարևորություն տվեցին արժեքային համակարգերին և դրսևորեցին փոխհարգալից վերաբերմունք նախ և առաջ միսլամն և կատմամբ, ձեռք բերեցին արքունիքում վստահություն և հարգանք: Գերագանց տիրապետելով լեզվին՝ նրանք կարողացան հաղորդակցման միջոցով համախմբել կենտրոնախույս ուժերին և ստեղծել մեկ ընդհանուր կառավարման համակարգ:

Միջմշակութային և միջկրոնական շփումների մասին խոսելիս հետաքրքիր է անդրադարձ կատարել նաև Եգիպտոսի այուբյան սուլթան Սալահ ադ-Դինի կողմից Երուսաղեմի հայ եկեղեցու բոլոր իրավունքների ճանաչմանը:⁷ Այդ ամենի արդյունքում ամրապնդվեցին հայ-եգիպտական հոգևոր-մշակութային կապերը:⁸

Միջմշակութային հաղորդակցման արդյունքում Եգիպտոսում ֆաթիմյանների ժամանակաշրջանում ձևավորվեց հայկական համայնք, որի թիվն, ըստ տարբեր պատմական աղբյուրների, հասնում էր 30 հազարի: Իսկ արդեն այուբյանների և մամլուքների օրոք սակավաթիվ հայկական համայնքը երկրում դասվում էր օրինակելի համայնքների շարքին: Եգիպտոսի կառավարման համակարգում հայկական փորձը և օրինակելիությունը շարունակվեց նաև հայ վեզիրներին հաջորդած մուսուլման վեզիրների օրոք՝ մինչև 12-րդ դարի կեսը:

⁷ Ի դեպ դեռ 638թ. Օմար խալիֆան Երուսաղեմը գրավելուց հետո հատուկ հրովարտակով հաստատեց բոլոր այն երաշխիքները, որ Մուհամմեդ ամրագրեց սովել էր հայ եկեղեցուն:

⁸ Ալ-Մակրիզին հիշատակում է, որ անգամ մամլուք բուրջիների դարաշրջանում հայ երևելիներից Մաուաֆի ալ-Դին արու-ալ-Ֆարաջի և Աբդ ալ-Դանի ալ-Սաբաայի կողմից Կահիրեի հայտնի թաղամասերում կառուցվել են մզկիթներ, հայկական դպրոցներ և եկեղեցիներ:

Intercultural Communication in Armenian-Egyptian Relations

Artur Israyelyan
YSU, Department of Diplomatic
Service and Communication,
Ph.D., Associated Professor

The present study concerns a very important sector of Armenian-Egyptian history in the middle ages and makes an attempt to highlight Armenian-Egyptian intercultural relations and reflects upon the Armenian factor in medieval Egypt. The intercultural communication resulted in a unique dialogue between Fatimid caliphs and Armenian politicians. That intercourse through a dialogue provided the latter with the opportunity to manage the state apparatus and to implement a number of reforms. Armenian influential viziers serving in Fatimid's caliphate were given such high titles, which had not been granted to anyone before.

A reference is also made on Armenian-Egyptian religious sphere; on the city of Jerusalem as a crossroad of cultures and religions, which has always been and still is considered a major center for intercultural and inter-religious relations, and where the Armenian community with its churches, schools and other cultural center was formed.

A reference is made also to the Mamluk Burji era, when the country was in dire economic and political situation and full of oppressions, still spiritual and cultural values were under consideration by the Armenians. Therefore, the mosques, Armenian schools and churches built by Armenians in well-known neighborhoods in Cairo are also mentioned.

Currently, Egypt has a rich Armenian cultural heritage, an Armenian exemplary community, which is mainly located in the cities of Cairo and Alexandria. The community is active in various spheres, has a very rich experience in cross cultural communication and religious-cultural issues, and by its huge potential is able to solve the problems facing it. One of the great achievements for the Armenian

community is the Armenian research study center, opened in Cairo University in 2008, where so far five international conferences have been held, which have had a great impact on the development of Armenian studies and on the recognition of Armenian Genocide. One could confirm that in Cairo University, which has over 250 thousand students, the establishment and activities of the Armenian studies research center testimonies the exclusive nature of intercultural communication between the two nations.

Talking about the value systems, intercultural communication and current Armenian-Egyptian friendly relations, editor of “Arev” newspaper Dr. Imam Mohammed Rifat's work in Egypt and beyond deserves special consideration. The monthly newspaper in the Arabic language edited by him enjoys a big prestige and popularity not only in Egypt but also throughout the Arab world. A number of books and monographs about Egyptian Armenians, the history of Armenia and Armenian Genocide belong to his pen.